Պատասխաններ - 12-րդ դասարան

1. Արևամուտին թուխ ամպերը պարուրում են վսեմաշուք Արագածը՝ քառագագաթ ու երկնասլաց ***կատարներով***, և ***մանրագնին*** նայողին թվում է՝ պայծառատեսի իր ***շնորհով*** տեսնում է իրիկնային Հայաստանի ակնապարար ու հովվերգական համայնապատկերը. սարերի ***փեշերին*** հանգրվանած գյուղերի՝ արևի հրակարմիր ճաճանչներով ոսկեզօծված տների տանիքներին իրիկուն է իջնում՝ ճրագալույցի առկայծող լույսերով ողողված, ու երդիկներից դեպի երկինք են ելնում ծխի շարասյուները՝ օձագալար, կապտաթույր քուլաներով: Լուսաբացին վաղորդայնի՝ մշուշը տարրալուծող արևից հետզհետե երևում են սարերի փթթուն լանջերը, ոսկևորվում՝ առվակները: Այդ երկնակարկառ լեռների ձյունագեղ կատարներից սկիզբ առնող աղբյուրները, գիրկընդխառն միանալով, կազմում են Բանոնի գետակը՝ պաղպաջուն ու սառնորակ կոհակներով. նա, թվում է, սրընթաց գահավիժում է՝ ասես ժամ առաջ ***ողջունելու*** խիտ ***ծառաստաններով*** գոտևորված շեների անխոնջ բնակիչներին, որ, վաղ այգաբացին արթնանալով, շտապում են դեպի իրենց այգիներն ու դաշտերը: Իսկ կեսօրին, երբ արեգակի ոսկեդեղձան ճառագայթներն ավելի ***հեղձուցիչ*** են դարձնում տապը, դրախտային ձորահովտում՝ սաղարթախիտ ծառի ստվերում՝ թավիշ ***կանաչին***, այծենակաճը ուսերին, աչքը մակաղած ոչխարների ***հոտին***, հանգիստն է վայելում հովիվը՝ ըմբոշխնելով ուրցածաղկի՝ քիմքը խտղտացնող անուշ ***բույրը***:

Ի՜նչ հրաշալի է հայկական բնաշխարհը:

2. **կատարներով**-որոշիչ, **մանրագնին**- ձևի պար., **շնորհով**- միջոցի խնդիր, **փեշերին**-տեղի պար., **ողջունելու**- նպատակի պար., **բույրը**- ուղիղ խնդ.,**ծառաստաններով**- ներգործող խնդ., **հեղձուցիչ** – ստորոգելի, **կանաչին** - բացահայտիչ, **հոտին**-հանգման խնդ.,

3. **Տեսնել, առնել, ելնել,** - հրամայական(3) **դառնալ**- վաղակատար ներկա/անցյալ, անցյալ կատարյալ, հրամայական եղանակ, հարակատար դերբայ, ենթակայական դերբայ(6) և բոլորի ժխտական ձևերը(1)- ընդհանուր 10

4. անջատման, ներգործող, վերաբերության խնդիրներ, պատճառի, հիմունքի, ժամանակի, տեղի պարագաներ, որոշիչ, բացահայտիչ:

5. հիշեցրեց, օրական, չորս կտոր, փախի՛ր, կաթեցնել, քծնող, բացառությամբ ձեզ, մի՛ խոսեք, հաչել, ինձ հետ:

6. **դի**- 1.կողմ, 2.դիակ, **ակ**-1.աչք, 2.անիվ, 3.զարդաքար, **կուս**(կույս)-1.կողմ, 2, անարատ **հոն**-1.հոնենուպտուղը, 2.արևմտ.այնտեղ,3. ասիական հնագույն ցեղախմբի ներկայացուցիչ:

7. **ցել**-վարած՝ հերկած արտ, **սնար**-մահճակալի գլխատեղի կողմը, **քմայքոտ**-քմահաճ, **գեղակն**-գեղաչվի, գեղաչյա, աչագեղ, **կափույր**- կափարիչ, խուփ, փական **լուտանք**-1. հայհոյանք, անարգանք, 2.չարախսություն, **երեսփոխան** - պատգամավոր **գեղոն** - 1. գեղգեղանք, 2. գեղազարդություն, արևմտ. բալլադ, **արտորալ**- 1.շտապել, փութալ, աճապարել, 2. վազվզել, **վարանք** - կասկած, տարակուսանք, երկբայություն:

Գնահատման չափանիշներ – 12-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 3 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր: